

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Յուլիսի 5-ին նորին Վեհափառութեան բախտ ունեցան ներկայանալ կ. Պօլսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Տնօրէն ժողովի կողմից տօքթ. Ն. Տաղաւարեան «Մշակ»ի խմբագիր Հ. Առաքելեանի հետ միասին, ներկայացնելով անձամբ Միութեան կողմից արուած բարեւար անդամակցութեան վկայականը և 12 մայիսի ներկայ ժուկ Տնօրէն ժողովի հետեւալ գրութիւնը.

ԴԵՐԱՓԱՄ ՏՒՂ.

Տնօրէն ժողովս առիթ ու բազգաւորութիւն ունեցած էր արգէն իր որդիական անկեղծ զգացումները խոնարհաբար յոտս Զերդ Վեհափառութեան գնել՝ բացատրելով թէ որքան զգածուած է բարոյական այն մեծ քաջալերանքին համար, զոր Զերդ Վեհափառութիւնը իր Հայրապետական օրհնածիր կոնդակովն ու հայ ժողովուրդին առւած նույնաբերութեան գեղեցիկ օրինակովը չնորհ ըրած էր ընձեռնել Ընկերութեանս ինչան բարձր համարմանն ու համակրանքին զոր ունի հանդէպ մեր կրթական գործին:

Տնօրէն ժողովս սրտի անխառն բերկրութեամբ մէ ուրեմն որ Զերդ Վեհափառութեան նկատմամբ իր ունեցած երախտագիտական անյետածգելի պարաքը կը կատարէ՝ Միացեալի ԲԱՐԵԲԱՐԱՐ հոչակելով Զերդ Վեհափառութիւնը որ պաշտպան ու սատար կանզնած է միշտ Ընկերութեանս:

Տնօրէն ժողովս այս քուէարկութիւնը հանդիսաւոր գումարման մը մէջ կտուարած է մասնակցութեամբ բոլոք ժողովականաց որոնք յուրընկայս ու խանդավառութեամբ առւած են իրեն ձայնը՝ յարգանք ընծայելու համար Մայր Աթոռոյ Սրբագնահնորհ Գահակալիկ ու մեծարեալ Հովուապէտիկ Ամենայն Հայոց, Արուն բարձր հովանաւորութիւնը կը հայցէ Միացեալի կրթական փրկարար զործին համար:

Բնդ գրոյս յուղաբկելով ուրեմն բարերար անդամակցութեան վկայականը, զոր ջնորհ պիտի ընէք ընդունիլ իբրև յիշասակ մը Միացեալի անմոռաց երախտապարառութեանը, կը մատչինք ի համբոյր Զերդ Սրբազնասուրը Աջոյն և կը միանք

Որդիական ամենախորին մեծարանօք ի դիմաց Հայոց
Միացեալ Ընկերութեանց Տնօրին ժողովոյ

Ատենապալիք Ատենապետ

Յ. Խազովինան Ար. Շմանինան

Նորին Վեհափառութեան՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նախադահ Պօղոս Նուպար փաշան հեռագրել է Փարիզից. «Բաղդաւոր եմ յայտարարել, որ Միութիւնը զրել է Զերդ Սրբութեան տրամադրութեան տակ 3000 ռուբլի երևանի ազիտեաների համար»:

Յունիսի 24-ին Սպահանից եղանիկ զարդարեան հեռագրել է Պարսից հսկոր պետի Սպահանաջափի մահուան մասին. Վեհափառ Կաթողիկոսը յայտնել է իւր ցաւակցութիւնը հանգուցեալի որդոց:

Աղանաջափի որդի Զալալեղին նաջափը յունիսի 30-ին հեռագրել է Նորին Վեհափառութեան հետեւեալը. «Զերդ Վեհափառութեան միթթարական հեռագիրը Զուղայի պատկանի առաջնորդարանի միջոցով ստացանք, մատուցում ենք խորին ջնորհակալութիւն»:

Նորին Վեհափառութեան՝ Ամերիկայի առաջնորդ Տ. Արակեան. ձ. վարդապետ Վեհունին իւր 20 յունիսի (ն. տ.) թուակիր համակով ի միջի այլոց զրում է հետեւեալը.

«Զերդ Վեհափառութեան հրամանով կատարած մեր այս վիճակային այցելութեանց միջոցին մեր այցելած բազմաթիւ թեմերում և քաղաքներում հազիւ ուրեք պատահում էլնք Ռուսակայ անհամների, հետեւթար կոսան ճեղսում և թիվրայտում էր որ առաջին անգամ՝ պատա-

հեցաւ մեղ տեսնել Ռուսահայ հոծ գաղթականութիւն մը բարձրացած էլլուսի մէջ կան 1500-ի չափ Ռուսահայեր, իսկ Ռիվրոսայտում միայն մի քանի թրքահայեր և երեք հարիւրից աւելի ալ Ռուսահայեր:

Հօսանճելլուսի թուրքահայերը, իշխակիայի և թուրքահայաստանի զանազան կողմերից եկած են մեծամասնութիւնը կազմելով Խարբերդ գաւառուից, զանազան առևելքական գործերով կզբաղուին, բայց առհասարակ փողոցներում կառքերով կանանչի և պատղ են ծախում:

Իսկ Ռուսահայերը գաղթած են Ալեքսանդրապոլի, Կարսի և Երեանի շրջաններից և առհասարակ զբաղւում են աղբահաւաքութեան գործով, մշակութեամբ և գործառութեամբ երկաթի գործարաններում և երկաթուղու գծերի վրայ: Մինչդեռ թուրքահայերի մեծագոյն մասը ընտանեօք գաղթած են, Ռուսահայերից հազիւ 25-ի չափ ընտանիքով կան, մասցեալները 6—7 հոգի մի սենեակում ապրում են. իրենք եփում իրենց կերակուրը նոյն սենեակում, աղտուկեղափ մէջ, և իրենց այդ անհախանձելի ապրելակերպով թէ՝ իրենց առողջութիւնն են խանգարում և թէ՝ բնիկներից արհամարհուում: Ռուսահայ գաղթականութեան հիմը զբած են սրանից 15 տարիի չափ յառաջ Ղարսի Խարազալա գիւղացի մալական հայեր, որոնց թիւը հասնում է մօտ 100-ի, նըանց հետևում են նոյն գիւղացի աւետարանական հայեր, որոնք այժմ կը լինեն մօտ 400-ի չափ, իսկ մեր հկեղեցու հարազատներ 1000-ի չափ կը լինեն, որոնք աւետարանականներից յետոյ սկսած են զատսրանից 10 տարի առաջ:

Ռիվրոսայտում գտնուող Ռուսահայեր ևս դարձեալ նոյն շրջաններից են, ամենից շատ Ալեքսանդրապոլի Տիւզքէնսա դիւղից են 70-ի չափ, կան նաև Բէրուրի, Ղազարապատ, Թալշանդաղ և Նորաշէն գիւղերից 10—15-ականի չափ՝ Կարսի Պաշտորակեալ գիւղից 15-ի չափ, նաև Իզգիրից, Թիվլիզից և այլ տեղերից: Ռիվրոսայտում և ոչ մէկ հայ ընտանիք կը գտնուի Թիւրքահայերից, միայն 3 ընտա-

նիք կան Թուրքահայ աւետարանականներ:

Աւետարանականք Լօսանձէլոտում ունեն մի պատուելի որը Ամերիկացւոց եկեղեցիներում է կատարում իր պրա-
րոգութիւնները Ռուսահայ և Թուրքահայ թաղերում, Թուր-
քահայ բողոքականները հազիւ 50-ի չափ կը լինեն:

Ռիվրայայտում ապրող Ռուսահայերի նիստ ու կացը
անհամեմատ աւելի կեղտոտ է քան Լօսանձէլէսինները, այն
աստիճան, որ հանրակառաքերում հայերին չեն թողնում,
բնիկների շարքին նստիլ. մի անարդանք որ նոյն իսկ Ամե-
րիկացիների համար ամենից ատելի եղող Զինացիների
հանդէպ իսկ չի ցոյց արւում:

Չորս հինգ սենեակից բաղկացեալ մի տան մէջ մինչև
30—35 հոգի ապրում են չոր տախտակների վրայ վեր
ընկած, նոյն իսկ դժուար կը լինի տան մէջ նստելու մէ
աթոռ գտնելու Տեղւոյն առողջապահական պաշտօնէութիւնը
հայ թարգմանների միջոցաւ աշխատում է յորդորել զիրենք
որպէսզի իրենց ապրելակերպը բարեփոխեն ապա թէ ոչ
քաղաքապետութիւնը պիտի հարկադրուի վատարել զիրենք
քաղաքից, իրեն ոչ ցանկալի հիւրեր, Մրանք փոխանակ
զգաստանալու, իրենց մէջ լեզու գիտցող և զիրենք յոր-
դորողներին դէմ լարուած, սկսած են ներքին պառակտում-
ների, նոյն իսկ մեր յորդորներն էլ անօգուտ անցան, որով-
հետեւ կը կարծէին որ մենք ևս թելադրուած էինք և երկրորդ
անգամ չուղեցին մեր արարողութեանց ներկայ գանուիլ»:

Յանկալի է՝ որ Ռուսաստանից Ամերիկա գաղթած
հայութեան դժբախտ և մինչև անգամ անպատճարել
կեանքը խրատ լինի այսուհետեւ այն մարդկանց համար,
որոնք իրենց մայրենի գեղեցիկ երկիրը, հայրական օջախը
կրմածեն թողնել և զաղթել ըստ երազած աւետաց,
բայց իրօք իրենց համար տանջանքի աշխարհը, թող մեր
հոգեոր հայրերը և ժողովրդի բանիմաց մասը խրատեն
այդպիսիներին՝ մնալ իրենց մայրենի երկրում և զնահա-
տեն մայրենի հողն ու ջուրը, քան թէ զնան օտար երկ-
րում գաղրահաւաքութեան գարծով զբաղուելու»: